ՆՈՐ ՆՅՈՒԹԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՆԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆԻ ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ինչպես հայտնի է, Սովետական Հայաստանի տերիտորիան մարդկային հասարակության մշակութային պատմության հնագույն օջախներից մեկն է։

Այժմ Հայկական լեռնաշխարհի տարբեր վայրերում (Թալին, Անի, Ջրաբեր, Նուրնուս, Նոյեմբերյան, Գորիս, Վարս) պատահականորեն հայտնաբերված քարե գործիքները նոր խնդիրներ են դնում հայ հնագիտության առջև։

Հայաստանի քարե դարի մշակույթն ուսումնասիրողները գրեթե մոռացության են տվել նույն ժամանակաշրջանի արվեստի գործերի ուսումնասիրությունը։ Խոսքն այստեղ հիմնականում վերաբերում է այն ժայռապատկերների ուսումնասիրությանը, որոնցով հարուստ է մեր լեռնաշխարհը։

Դեռևս 1930-ական թթ. Հայաստանի ժայռապատկերների հավաքման և ուսումնասիրման գործի հիմքերը դրեց հանգուցյալ պրոֆ. Ա. Քալանթարը։ Արագածի լանջերում և Սևանի ավազանում նրա հայտնաբերած առաջին իսկ ժայռապատկերները մեծ հետաքրքրություն առաջ բերեցին գիտական աշխարհում։

Սակայն նրա հայտնաբերած մի քանի հարյուրի հասնող ժայռապատկերները այդպես էլ լույս աշխարհ չեկան և ձեռագիր աշխատությունների մի մասի հետ ոչնչացվեցին։

Վերջերս Ա. Քալանթարի կինը Հայաստանի պետական պատմական թանգարանին է հանձնել Ա. Քալանթարի կողմից լուսանկարված շուրջ հարյուր հուշարձանների՝ այդ թվում 25 ժայռապատկերների սևանկարներ, որոնք գտնվում են խիստ աղճատված և վատ պահպանված վիճակում։ Պետական պատմական թանգարանի ֆոտո-ֆոնդերում պահպանվող սևանկարների վերանորոգման շնորհիվ այժմ հնարավոր է դառնում ոչնչացումից փրկել քսանչորս ժայռապատկերներ, որոնք հայտնաբերվել են Ա. Քալանթարի կողմից Արագածի լանջերին և Մարտունիի շրջանում[1]։

Դժվար է մեզ հասած լուսանկարների միջոցով ճշտել և մատնացույց անել հուշարձանների տեղը, սակայն ներկա հրապարակումից հետո, անկասկած, այդ հուշարձանների վայրը որոշելու գործը կդառնա ավելի դյուրին և ամենակարևորը՝ մեր հնագետների ու արվեստագետների ձեռքին շոշափելի նյութ կլինի հին Հայաստանի մշակույթի պատմության մի նոր էջ կազմելու համար։

Լ. Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ

---

[1] Սևանկարների վերանորոգման աշխատանքները կատարվել են գեղանկարիչ Ռ. Հարությունյանի և լուսանկարիչ Գ. Ժամկոչյանի ջանքերով։


(1)
(2)
(3)
(4)
(5)

⑥

⑦

⑧


9


10


11


12
13
14
15
16



17

18



19

20



21 22

23 24










34



35

36

НОВЫЕ МАТЕРИАЛЫ ПО ДРЕВНЕЙШЕЙ ИСТОРИИ ИСКУССТВА АРМЕНИИ

Л. А. БАРСЕГЯН

(Р е з ю м е)

Еще в 1930-х годах покойным археологом проф. А. Калантаром было собрано и изучено около 300 древних наскальных изображений, которые до сих пор не опубликованы.

Недавно супруга А. Калантара передала Государственному историческому музею Армении негативы некоторых фотоснимков, в которых сохранились публикуемые наскальные изображения, дающие богатый материал по древнейшей истории искусства Армении.